




“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ՂՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅԵՄԲԵՐ 1, 1897

ԹԻԻ 11



ՆԻԱԿԱՐԱ

Նիակարա գետը իրի լիճը կը կապակցէ Օնթարիօ լճին հետ: Այս լիճերը իրարմէ 33 մղոն հեռի են: Քանառա անոնց մէկ կողմն է և Միացեալ Նահանգները միւս կողմը: Նիակարայի ջրվէժները ամենէն հոշակաւոր ջրվէժներն են աշխարհիս մէջ: Պատճառը չէ 160 ոտք (իբր 50 մետր) բարձրութիւնը ուրկէ ջուրը վար կը թափի, հապա՝ գետին մեծութիւնը և ջուրին ամբաւ քանակութիւնը: Այս ջրվէժներէն վար կը թափին ոչ միայն իրի լճին ջուրերը, այլ նաև աւելի մեծ լիճերուն, Հրատընի, Մելիկընի

և Սիփրիլըրի, ջուրերը: Ջրվէժներուն վերը գետը շատ սրագ կը վազէ, վասն զի մինչև հոն, այսինքն մղոն մը տեղ, հեղհեղէ կը ցածնայ 52 ոտք: Ջրվէժներէն ճիշդ վերը գետին լայնքը 1,000 մետր է, և վարի խորունկ վիհին լայնքը նեղնալով 1,000 ոտք է: Ջրվէժները կղզիի մը միջոցաւ երկու մասերու կը բաժնուին, այսինքն՝ Ամերիկեան ջրվէժներու, որոնք պատկերին ձախ կողմը կը տեսնուին, և Գանատական կամ Պայտաձև ջրվէժներու: Իսկ աւելի մեծ ջրվէժները ուղղակի պատկերին ճակատը կ'երևնան: Ջրվէժներն այցելողը պէտք է միշտ

գէթ ամբողջ օր մը նուիրէ: Պէտք է որ առտուանց արշալոյսին ճամբայ ելլէ, և իրիկունը, մինչև որ լուսնի կամ աստղերուն լոյսը երևան ելլէ, պէտք է որ պտըտի և դիտէ զանոնք, որպէս զի ընդունի այն պատշաճ տպաւորութիւնը զոր ներշնչելու յարմար է Աստուծոյ այս մեծ սքանչելիքը: Գետին գոռումը կրնայ լուռի քսան մղոն հեռաւորութենէ: Մօտ տարիներուս մէջ ջրվէժները գործածուիլ սկսան մարդոց պէտքերը լեցնելու՝ իբրև գործանոցներու շարժիչ զօրութիւն:

ԿԱՐԱՊ

Մեծ թռչուններուն մէջ կարապն է ամենէն գեղեցիկը: Մասնաւորապէս լողացող թռչուն է: Ուժի կողմանէ կրնայ բաղրատուիլ արծիւին հետ: Կ'ըսուի թէ չափահաս կարապը կրնայ

հինգ կամ վեց շաբաթ կը նստի: Կրնայ իր կռնակը կակուղ ապահով օրորոց մը ձևացնել, իր թևերը քիչ մը բարձրացնելով օրորոցին եղբրքներ ձևացնելու համար, որպէս զի իր ձաղերը ջուրէն անցընէ երբ տակաւին ստրված չեն լողալ:

Սիսակ շատ աշխատեցաւ զանիկա ձեռք բերելու համար: Ընտրած էր ճառախօսութեան շատ հրապուրիչ և ազդու ոճով նիւթ մը և ժրպանութեամբ վարժութիւն կ'ընէր: Ստուանց, կէս օրին և իրիկունը մեծ կարմիր ամբարանոցին քովէն անցնող ներք կը լսէին ատենախօսութեան վարժութիւն ընող այդ տղին ձայնը: Կովերը և ձիերը այնպէս սովորած էին անոր ատենախօսելուն, որ զարմանքով վեր կը նայէին երբ լսիկ մը ամբարանոց կը մտնէր. և թաւամազ ծեր շունը անտարակոյս կը հաչեր ամէն մէկ բառին համար եթէ միայն կարող ըլլար հասկընալ:

The STAFFED SWAN
GIVES OUT HIS SNOWY PLUMAGE TO THE CHIEF,
AND ARCHING PROUD HIS NECK, WITH ORNY FEET
BEARS FORWARD PIERCE, AND SWAYS HIS OSIER ISLE.
PROTECTIVE OF HIS YOUNG.
THOMSON'S SPRING



Վերջապէս եկաւ մրցման առաւօրը: Քսան ծնողքներ հետաքրքրութեամբ կը տատանէին իրենց նստարաններուն վերայ, ամէն մէկը պատրաստ ծափահարելու երբ իրենց մանչը կամ աղջիկը ստանար մրցանակը: Տասը մրցակիցներ, ամէն մէկը մետալը ստանալու վստահ անձկութեամբ կը նայէին քով սենեակէն: Հետաքրքրութեամբ և անհամբեր կը սպասէին լսել դատաւորներուն վճիռը թէ ո՞վ մրցանակին արժանացած էր: Վերջապէս լսեցին դատաւորներուն յայտարարութիւնը տասը մանչեր և աղջիկներ շունչերնին բռնած, անոնցմէ մէկը յուզմամբ և մեծ ցնծութեամբ, և իննը՝ յուզմամբ բայց ոչ թէ ցնծուն յուզմամբ:

Մետալը — այն փառաւոր մետալը, որուն համար Սիսակ իր բոլոր առնական կարողութիւնն ողն աշխատած էր — պիտի ընդունէր կարճ շրջազգեստով փոքրիկ աղջիկ մը: Տղէ մը կամ գէթ դասընկերէ մը յաղթութիւնը բաւական դժուար պիտի ըլլար, բայց, ո՞հ, զրկուիլ իր բոլոր փառաւոր երազէն տասնութեք տարեկան և իններորդ կարգէն եղող աղջիկի մը ձեռքով, անտանելի էր:

Իր թևին մէկ հարուածովը կտորել մարդու մը բազուկը: Կարապը շատ կը սիրէ հանդարտ և շուք ջուրերը, և գլխաւորապէս հիւսիսային լայնութեան մէջ կը գտնուի: Լճի վրայ զուտ ճերմակ կարապներու երամի մը լողալը ամենէն գեղեցիկ բանն է մարգագետնին մէջ:

Կարապը իր հաւկիթներուն վրայ

ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Սիսակ ծոյլ տղայ մըն էր, բայց երբ մէյ մը բան մը ընել որոշէր, ա՛լ անչուտ ի գործ կը դնէր: Հաստատ միտքը գրաւ որ բարձրագոյն դպրոցին ատենախօսութեան մրցանակը ստանայ, և տէր ըլլայ չքեղ նոր հեծանիւի մը զոր իր հօրեղբայրը խոստացած էր զինքը խրախուսելու համար:

անտանելի էր:

Սիսակ որ չկրցաւ նորհաւորութիւններ ընդունիլ որոնց կ'ակնկալէր, տղոց բազմութեան հետ մէկտէ գնաց սուրբով և կատակներ ընելով և երևութապէս ինքզինք զուարթ ցուցնելով, բայց ներսուանց սաստիկ տրտած էր:

Հետևեալ գեղեցիկ առաւօտը երբ արթնցաւ, սրտին վիշտը նորէն եկաւ գտաւ զանիկա: Շքեղ նոր հեծանիւր չկատարուած երազ մը պիտի մնար: Եւ մէյմ'ալ երբ պիտի դար մրցման օրը:

Յանկարծ նոր խորհուրդ մը եկաւ միտքը: Եւ վարձապետները շաբաթներով և ամիսներով աշխատած էին կրթել զինքը և պատրաստել այդ մրցմանը: Այս առաջին անգամն էր որ փորձը կատարուեցաւ վրան:

«Ես դպրոցին մէջ շատ անհոգութիւն ըրի», ըսաւ ինքնիրեն, «եթէ երբեք ատենախօս չեմ կրնար ըլլալ, գէթ կրնամ սորվիլ դասերս»: Եւ համոզուելով թէ իր ընտանիքին նախատիքը ըլլալէ զերծ կրնար մնալ ժրջանութեամբ աշխատելով միայն, սկսաւ աշխատիլ: Սերտողութեան համար որոշուած ժամանակը պէտք էր սերտողութեան տալ ամբողջ: Երբ այսպէս ըրաւ, տեսաւ որ առաջ ուրնէ աւելի դիւրին կը գտնէր աշխատութիւնը: Նոր եռանդով այն պէս սկսաւ աշխատիլ դասերուն սերտողութեանը, ինչպէս առաջ չէր աշխատած երբեք: Իրաւ, թէ պէտ փայլուն ուսումնական մը չեղաւ, բայց իր քննութիւններն անցուց վստահելի կերպով, և ժամանակին ընթացակարգ եղաւ չափաւոր պատիւներով:

Տարիներն անցան, մանկութեան ժամանակի պարտութիւնը շատոնց մոռցուած էր: Սիսակ սաստիկ աշխատող երիտասարդ մը եղաւ և գործի մարդ մը, բոլոր կարողութիւնովը պարապելով իր գործերուն: Խնդիր մը յերևան եկաւ որ Սիսակի աչքին կենսական կարևորութիւն ունեցող բան մը կ'երևնար. և Սիսակ իր քաղաքաւիցիներէն բազկացած ունկնդիրներու առջև կանգնելով արտայայտեց իր համոզումները:


Ո՛հ, այն ատեն տեսնուեցաւ իր վարժութիւններուն արդիւնքը: Բազմութեան առջև երևնալու բոլոր սուկումները յաղթուած էին այնչափ ժամանակ առաջ ըրած մանկական կրթութիւններուն շնորհիւ: Առանց չուարելու և անյողդողդ կարող էր կայնելու և ատենախօսելու իր հակաուսուցողներուն առջև: Իր դաստիարակեալ միտքը որ յստակօրէն բնութեան էր իրողութիւնները, նիւթին ամէն կողմին ծանօթացած էր: Կը ջանար ճշմարտութեան համար և ոչ թէ փառքի համար, և վերջապէս նպատակակէտին զարկաւ և փառքին

ալ տիրացաւ: Թարգման հանդիսացաւ իր չորս կողմը գտնուող ժողովրդին, և ընդունեց անոնց մեծաբանքները զոր կարող էին տալ:

Ինչ պիտի ըլլար արդիւնքը եթէ այն կանուխուան մրցման մէջ շահէր մրցանակը: Հաւանականապէս սա պիտի ըլլար. աւելի ժամանակ պիտի տար ատենախօսութեան վարժութեան և աւելի անփոյթ պիտի ըլլար իր դասերուն: Թերևս պատիւներ պիտի ընդունէր և յետոյ պիտի մոռցուէր: Վասն զի ձեռքը գտնուած գործին զանցաւորութիւն ընողը երբեք մնայուն փառքի չտիրանար:

Սյսպիսի մրցումներու մէջ միայն մէկ անձ կրնայ ստանալ մրցանակը, բայց իսկական վարձքը աշխատելու կարողութիւնն է: Ամենէն ստորին համարուած անձը կրնայ ամենէն աղէկ բանը ձեռք բերել: Սիսակի համար,


խոցել վաղած ժամանակը: Այս, ինչ ալ ըլլար բոբողոնին համար, աղէկ զբօսանք էր մարդուն և անոր ձիուն համար:



ԱԿՆՎԱՆԻՒ ՊԷՍ ՊԱՅՄԱՌ

«Մեր անունը իրենց ճակատներուն վրայ պիտի ըլլայ» Յայտ. ԻԲ. 4.

Երբ անգամ մը հայրենիք, Ամերիկա, գացի, օր մը կէս օրէն ետև ցերեկեայ դպրոց մը այցելեցի. և երբ չորս կողմն նայեցայ հոն հաւաքուած տղոց վրայ, անոնց դէմքերը ինձի ընտանի երեցան ընդհանրապէս, և կրնայի ըսել թէ անոնցմէ ոմանք ո՛րո՛ւ զաւակներ էին, վասն զի շատ կը նմանէին իրենց ծնողներուն: Անոնց ճակատներուն և երեսներուն վրայ կարծես թէ գրուած էին անունները այն մանչերուն և աղջիկներուն, որոնց հետ ուսած և խաղացած էի գրեթէ



ինչպէս թերևս նաև մեզմէ շատերուն համար, տարբեր շատ մը մրցումներու մէջ, պարտութենէն օրհնութիւն յառաջ եկաւ:

ԲՈՅՈՂՈՆԻ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ

Ամերիկեան բոբողոնը կամ պիզոնը, որուն մէկ աղուոր պատկերը կը տեսնէք հոս, առաջ մեծ բազմութիւններով կը գտնուէր Միացեալ Նահանգաց արևմտեան մասին մէջ. բայց հիմա անոր ցեղը գրեթէ անհետացած է: Բոբողոնը առ հասարակ մեծ երամակներով կը պտտէր, և փորձ որսորդները շատ դիւրութեամբ կրնային անոնցմէ մէկ քանին սպաննել: Մինչև անգամ եթէ երամակը ցրուած ըլլար, հեծեալ որսորդ մը բոբողոնի մը հասնելու և զանիկ սպաննելու զիժուարութիւն չէր կրեր, վասն զի ընտիր ձի մը կրնար անոնցմէ արագ վազել և հասնիլ անոնց, և Հնդիկ որսորդ մը կրնար կենդանին նիզակով

քսան տարիներ առաջ: Գրիտտո կ'ըսէ թէ իր հաւատացեալները պիտի ծառայէն իրեն, և պիտի տեսնեն իր երեսը, և իր անունը անոնց ճակատներուն վրայ պիտի ըլլայ: Ռոբիշ տեղ մը կ'ըսէ, թէ անոնց վրայ որ կը յաղթեն՝ պիտի զրէ իր Աստուծոյն անունը և իր նոր անունը, և Աստուծոյ քաղաքին, Նոր Երուսաղեմին, անունը. այն քաղաքին որուն կը վերաբերին և դէպ ուր կը ճամբորդեն այսպիսիները: Եթէ այս նշանները անոնց ճակատներուն վրայ են և պարզ կը տեսնուին, ուրեմն մարդիկ անշուշտ պիտի ճանչնան թէ մենք որո՛ւ կը վերաբերինք և ո՛ւր կ'երթանք:

Երբ կայէն հեռացաւ Տէրօջը ներկայութենէն, անոր վրայ նշան մը դրուեցաւ, թերևս ճակատին վրայ, այնպէս որ զանիկա ամէն տեսնող ճանչնար թէ մարդասպան էր:

Եղեկիէլ մարդարէն իր տեսիլքներէն մէկուն մէջ տեսաւ վեց մարդիկ որ իրենց ձեռքերը սուր զէնքեր ունէին, և անոնց մէկը մեղանով լեցուն

կաղամար մը ունէր: Աստուած ըսաւ անոր որ երթայ պարտի երուսաղէմի մէջ և նշան մը դնէ անոնց ճակատներուն վրայ որոնք կը հառաչէին և կու լային այն երկրին մէջ իրենց դորձած մեղքերուն վրայ: Այնուհետև միւսներուն ըսուեցաւ որ երթան սպաննեն բոլոր անոնք որ նշան չէին կրեր իրենց ճակատներուն վրայ:

Եթէ ամբողջ շաբաթ մը ձեր ետեւէն պտըտիմ և աղէկ դիտեմ ձեզ, և լսեմ ձեր բոլոր խօսածները, կարծեմ պիտի կրնամ ըսել թէ դուք քրիստոսի նշանը ձեր վրայ կը կրէք թէ ոչ: Բայց եթէ ես չեմ կրնար այսպէս դիտել ձեզ, կայ Մէկը որ կրնայ և կը դիտէ:

Երբ անգամ մը ճամբորդութիւն կ'ընէի, կայարանէն օտարական մը եկաւ շոգեկառք մտաւ, և յանիրաւի նստաւ ճամբորդի մը նստարանին վրայ: Բայց մարդը այնպէս խոհեմութեամբ և հեղութեամբ վարուեցաւ, որ «Մ.յդ մարդը ճշմարիտ քրիստոսն է այ է» ըսի ինքնիրենս: Յետոյ հասկըցայ որ շատ շիտակ կարգացած էի Յիսուսի անունը ճակատին վրայ:

Երբեմն կը սխալինք այս բանին մէջ, բայց երբ քրիստոսի անունը յստակ կերպով կը գրուի մարդու մը ճակատը, ուրիշներ ընդհանրապէս կը դիտեն: Չեղմէ ոմանց երեսներուն վրայ կը տեսնեմ այս նշանը և կը հասկնամ թէ Մեծ Թագաւորին ծառաներն էք և դէպ ի երկնային քաղաքը կը ճամբորդէք: Բայց ձեզմէ ոմանց վրայ այս նշանը ազատ և աննշմարելի է, այնպէս որ մարդ վստահ կերպով չգիտնար թէ ձեր վրայ նշան կայ թէ ոչ:


Փոքրիկ տղայ մը ըսաւ ուրիշի մը, «Կը լսեմ թէ եղբայրդ Աշոտ քրիստոսնայ եղեր է, այնպէս է» «Չեմ գիտեր», պատասխանեց միւսը, «այնպէս կ'ըսեն, բայց ես պիտի փորձեմ և հասկնամ»: Ուստի սկսաւ նեղել և անհանդիստ ընել իր եղբայրը. կուտըրտեց անոր խաղաղիկները, շարչարեց անոր շունը և ուրիշ գէշ բաներ ըրաւ: Բայց Աշոտ չբարկացաւ, և փոխարէն շարիք չըրաւ անոր: Այն ատեն եղբայրը ըսաւ իրեն հարցնող տղին, «Աշոտ ճշմարիտ քրիստոսնայ է. փորձեցի զանկա և գիտեմ»:

Կը տեսնէք թէ Յիսուս իր անունը Աշոտի ճակատին վրայ գրած էր: Դուք Թագաւորին ծառաներէն էք: Ուրիշներ, նայելով ձեր գործերուն և կեանքերուն վրայ, կը տեսնեն Անոր անունը ձեր ճակատներուն վրայ գրուած:

ԿԱՊԻԿ ՌԻՆԿԵՂԻՐՆԵՐ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԵՋ
Տղաք, շատ տարօրինակ պիտի թուի տեսնել խումբ մը կապիկներու եկեղեցի դալը քարոզ լսելու համար, այնպէս չէ: Եւ սակայն Պատ. ձեյքրպ Չէյմպլըրէն, Հնդկաստանու միսիոնար մը, իր վախճանը Մաշաֆի ՄԵՋ անուն գիրքին մէջ իր պաշտամունքներէն մէկուն ատենը պատահած այս պիտի նորօրինակ դէպքի մը պատմութիւնը կը դնէ: Օր մը կը քարոզէր Հնդկաստանի մէկ գիւղին փողոցին մէջ: Եւ սապէս կը պատմէ իր այդ տարօրինակ ունկնդիրներուն վրայ:

«Փողոցին դիմացը դանուած տուներուն ետեւը երկար կարգ մը ծառեր կային, որոնց ճիւղերը տափակ տանիքներուն վրայ կը տարածուէին: Երբ դիպուածով աչքերս վեր վերցուցի, տեսայ որ այս ծառերուն ճիւղերէն շատը կը սկսէին ծուլ վար դէպ ի տանիքները, և ահա քանի մը ծեր կապիկներ կը նայէին տերևներուն մէջերէն: Շուտով անոնցմէ ոմանք վարցատկեցին տեսնելու համար թէ փողոցին մէջ գտնուող իրենց մեծ եղբայրները՝ ինչու համար կայնեն և այնքան մտադրութեամբ կը նայէին այս ճերմակ մարդոց որ կը կենային բեմին վրայ: Հողաբլրին վրայ ցատկելով նստան իրենց ետևի ոտքերը կայսած՝ և աչքերնին տնկած քարոզչին կը նայէին, ինչպէս կը տեսնէին թէ հոն գտնուող մարդիկը կը նայէին: Ուրիշ կապիկներ ալ անոնց հետևեցան մինչև որ երկար շարք մը կապիկներ նստան հողաբլրին վրայ: Վերջէն եկողները, կը տեսնէի որ հողաբլրին ետևէն կը քայլէին և իրենց նստելու համար բաւական լայն տեղ մը կը մնտուէին: Երբ չէին գտներ իրենց նստելու բաւող տեղ մը երկու կապիկներու մէջտեղ, որոնք արդէն նրստած էին, ձեռքերնին կ'երկնցնէին և մէկ կողմ կը հրէին զանոնք և իբր թէ կ'ըսէին, «Հաճեցէք քիչ մը մէկ կողմ նստել, մեզի ալ տեղ ըրէք»: մինչև որ նստարանը լեփեցուն եղաւ: Դիտեցի որ շատ մը մայր կապիկներ իրենց պղտիկներն ալ հետ բերած էին եւ կեղեցի: Այս մանուկ կապիկները իրենց մօր աղբիւրն վրայ կը նստէին, և նա իր ձեռքով զանոնք գրկած էր ճիշդ ինչպէս կ'ընեն մարդիկ: Բայց յայտնի էր թէ քարոզը շատ բարձր էր այս փոքրիկներուն համար: Վեր նայելով տեսայ որ կապիկի ձագերէն մէկը զգուշութեամբ իր ձեռքը երկնցուց և ուրիշ փոքրիկ կապիկի մը պոչէն բռնելով սկսաւ քայլել Միւս


ձագը ետ ետ դնաց, բայց անոնց մայրերը եկեղեցւոյ մէջ անոնց ըրած այս թեթևութեանը յայտնապէս չհասկնացան. և իւրաքանչիւրն իր ձագին ականջին մէյակէ կարուած տուաւ իբր թէ ըսելով, «Հանդարտ կեցիր, եկեղեցիին մէջ ատանկ կը կենան»: Այսպէս պարկեշտութեամբ նստան մինչև որ քարոզիչը աւարտեց քարոզը, և մինչև որ Աւետարաններ և տետրակներ բաժնեցինք ունկնդիրներուն, և քաղաքավարութեամբ անոնց մնաք բարեաւ ըսելով մեր վրանները դարձանք»:



ՍՊԱՐԱՊԵՏԸ ՕԳՆԵՑ ԱՆՈՆՑ

Մեծագոյն մարդիկ են որ ամենէն աւելի կը մոռնան իրենց բարձր աստիճանը, բայց այս կերպով քիչ անգամ կը կորսնցնեն բան մը:

Ուաշինկթըն օր մը զինուորներու փոքր խումբի մը պատահեցաւ որոնք սաստիկ կ'աշխատէին պատերազմի վերաբերեալ գործիքներ, զէնքեր, ևն. վերցնելու, փառասէր փոքրիկ սպայի մը հրամանին տակը, որ իր հրամանները կու տար արդարեւ շատ վճռական կերպով: Ուաշինկթըն տեսնելով մարդոց շատ ծանր աշխատութիւնը, ձիէն վար իջաւ, օգնեց մարդոցը սաստիկ քրտնելով, մինչև որ վերցուելու բեռը վեր առնուեցաւ: Յետոյ դառնալով սպային, հարցուց թէ ինչու ինքն ալ չօգնեց: Եւ սա խիտ պատասխան ընդունեց. «Չէք գիտեր թէ ես դնդապետն եմ»: «Ի՛նչ, աղէկ», ըսաւ Ուաշինկթըն, «եթէ ուրիշ անգամ քու մարդիկդ այսպիսի ծանր բեռ մը վերցնեն, սպարապետիդ լուր դրկէ», և ձին վրէժի քշեց: Գնդապետը ստուկաց և պապանձեցաւ:



ՊԶՏԻԿ ԳԵՏՆԱԽՆՁՈՐ ՄԸ

Սմերիկեան Գոնէքթիլըթ նահանգին թորլնտ քաղաքէն մարդ մը շատ պզտիկ գետնախնձոր (apple) մը գըտաւ իր գրպաններէն մէկուն մէջ երբ գործէն տուն դարձաւ: «Տնկէ ասիկա», ըսաւ ծիծաղելով տասներկու տարեկան տղի մը որ իր հետ կը բնակէր, «և ատոր արգիւնքը քեզի պիտի բաւէ մինչև որ չափահաս ըլլաս»:

Այդ փոքրիկ փայլուն տղան առաւ գետնախնձորը և կտրեց բաժնեց զանիկա այնքան մասերու որքան «այլքեր» ունէր պտուղը և անկեց զանիկա: Չորս տարի անց (1915) գետնախնձորի տէր

Ամերիկայի Միտիոնարայի
Արտօմատէր
Տնօրէն—Մարգրիտ
Ճինճանճըլար Եղաւ:

ԿՈՍՏԱՆԴՆՍԻՆԻ
Ի ՅՊՐԱՆԻ Ա. ՅԱՎՈՐ ԳՕՍԱՅՆՆ